ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ազատի ջրամբարի հատակային ջրթողի խողովակաշարերի շինարարական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան

03 հուլիսի 2018 թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ռ. Անդրեասյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Գ. Մկրտչյան)

Ընդունել ի գիտություն՝

• Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «Եղվարդշին» ԲԲ ընկերությունից պահանջվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝

1) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը·

2) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին: Նշված տեղեկանքին կցվում են նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած

գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

• Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը նույնպես ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված պայմանագրերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց: Տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տվյալները համապատասխանում են հրավերի պահանջներին:

Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

1.2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

1.3. Մասնակցի՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը: Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Մասնակցի որակավորումը «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1«Եղվարդշին» ԲԲ ընկերության հայտը գնահատել բավարար:

2.2 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Եղվարդշին» ԲԲԸ-ին:

2.3 Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝		Գ. Մկրտչյան
Անդամներ՝		Ա. Ջալադյան
		Ռ. Անդրեասյան
		Ն. Համբարձումյան
		Բ. Եդիգարյան
Հանձնաժողովի քարտուղար		Ն. Նիկոլայան